


## ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

# ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՄԱՏՌԱՆ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Ծիծեռնակաբերդում, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի մոտ, կկառուցվի մատուռ: Ապրիլի 23-ին մատրան հուշաքարի մոտ, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հողի օրհնության կարգ:

«Ծիծեռնակաբերդի այս բարձունքին կանգնեցվելու է սրբազան մատուռ, որտեղ մշտահունչ աղոթք է կատարվելու մեր նախատակների լույս հիշատակին: Այն կանգնեցվում է, որպեսզի այս մատուռից ճառագող օրհնությունը պատի մեր մեկ ու կես միլիոն զոհերի անթաղ ոսկորները և այս մատռան հարկը դառնա անմեղ զոհերի հոգիների բնակարան: Սուրբ մատրան առջև մեր ժողովուրդը պիտի գա ուխտի, որպեսզի մասխահայաց Եղեռնի հիշատակաց այս հուշահամալիրների ներկայությամբ հաստատի իր հավատարմությունը մեր նախնյաց սրբազան հավատքին, ուխտի՝ ապրել նրանց տեսիլքներն ու երազները կյանքի կոչելու վճռականությամբ ու նախանձախնդրությամբ: Եկեղեցու զանգերը այս բարձունքից պիտի հնչեն, տարածվեն ի Սփյուռս աշխարհի որպես կոչ ու հրավեր մեր ժողովրդին, որպեսզի հայությունը շարունակի հետևողականորեն հետամուտ լինել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման նվիրական գործին, որպեսզի ոչ ոք չհամարձակվի երբեք ազգերի ոչնչացման չարահնար ծրագրեր մտածել»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Մատուռը կկառուցվի համազգային ընծայաբերությամբ:

Մինչ արարողությունը, Հայրապետական թափորը և բոլոր ներկաները, ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների, աղոթք բարձրացրին նաև Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակի մոտ:



ՄԱՏՈՒՌԻ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՄԱՏՈՒՌԻ ՏԵՂՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԱԾ ՀՈՒՇԱՔԱՐԸ



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ԱՌՋԵՎ

ԳԻՏՈՒԹ



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Արարողությանը ներկա էին ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ: Արարողությանը մասնակցեցին նաև Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առիթով Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների բարձրաստիճան եկեղեցականներ ու պատվիրակներ՝ Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխնախագահ, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Մարկ եպս. Եգորևսկին, Ալեքսանդր սրկ. Վասյուտինը, դոկ. Սերգեյ Գովորունը (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Մալաթիուս արքեպիսկոպոսը (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), Սերաֆիմ արքեպիսկոպոսը (Վրաց Ուղղափառ Եկեղեցի), Կորնելիու եպս. Բարլադեանուլը (Ռումին Ուղղափառ Եկեղեցի), Թերմոպիլեի Իոաննիս եպիսկոպոսը (Հույն Ուղղափառ Եկեղեցի), Դեյվիդ եպս. Թասթինը (Անգլիկան Եկեղեցի), ինչպես նաև Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ Վեր. Ժան Առնոլդ դե Կլերմոնը:

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ նահատակների:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական և հոգևոր այրեր, Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ ու պատվիրակություններ, օտարերկրյա դիվանագետներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*